ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1953 Общественные науки

Գ. Բրուտյան

ՍԵՄԱՆՏԻԿՅԱՆ ԻԴԵԱԼԻԶՄԻ ՌԵԱԿՑԻՈՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» հանճարեղ աշխատության մեջ Ի. Վ. Ստալինը ցույց է տվել, որ ժամանակակից կապիտալիզմի գոյության անհրաժեշտ պայմաններից մեկը պատերազմների ու ագրեսիայի քաղաքականությունն է։ Այդ քաղաքականությունը բխում է կապիտալիստական սիստեմի բուն էությունից և պայմանավորված է մարդկանց գիտակցությունից անկախ գոյություն ունեցող էկոնոմիկական օրինաչափություններով։

Ատլանտյան ագրեսիվ բլոկը ԱՄՆ-ի գլխավորությամբ այժմ պատերազմների նախապատրաստման քաղաքականությունից անցել է պատերազմների իրագործման քաղաքականության։ Ամերիկյան ագրեսիան Կորեայում և Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի դեմ՝ ամբողջ աշխարհի ժողովուրդների առջև մերկացրին ԱՄՆ-ին որպես նոր պատերազմի հրձիգի, ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը ամեն կերպ ձգտում է երրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման։

Նոր համաշխարհային պատերազմի անգլո-ամերիկյան ոգեշնչողները հատկապես գործի են դրել պատերազմի իդեոլոգիական նախապատրաստման բոլոր միջոցները։ Ամերիկյան իմպերիալիզմի վարձու գրչակների հոծ բանակը ծախու մամուլի ու ռադիոյի, նեխած ֆիլմերի օգնությամբ և այլ միջոցներով ճգնում է թունավորել շարքային մարդկանց գիտակցությունը՝ նոր պատերազմի անհրաժեշտության պրոպագանդայով և մոլորեցնելով ժողովուրդներին՝ նրանց պատերազմի մեջ ներգրավել։

Նոր համաշխարհային պատերազմի նախապատրաստման գործին ակտիվ մասնակցություն են ցույց տալիս ամերիկյան իմպերիալիզմի փիլիսոփայող սպասարկուները։ Իմպերիալիզմը և ագրեսիան, պատերազմներն ու ժողովուրդների ստրկացումը իրենց «թեորիական» արդարացումն են գտնում ամերիկյան իմպերիալիզմի նեխած փիլիսոփայության մեջ։

Ամերիկա-անգլիական բլոկի երկրներում, պրագմատիզմի հետ միասին, ամենատարածված «փիլիսոփայությունն» է հանդիսանում սեմանտիկյան իդեալիզմը։ Սեմանտիկյան իդեալիզմի դասակարգային արմատների բացահայտումն ունի կարևոր նշանակություն, որովհետև այն չբավարարվելով փիլիսոփայական այս կամ այն պրոբլեմի ուսումնասիրությամբ, հավակնություն ունի հանդես գալու որպես ժամանակակից կապիտալիստական աշխարհի սոցիալական բարելավման միջոց։

Սեմանտիկյան իդեալիզմը հանդիսանում է տրամաբանական պոզիտիվիզմի նորագույն, ամենառեակցիոն տարատեսակը։

Տրամաբանական պոզիտիվիզմը ծագել է մեր դարի քսանական թվականներին։ Նրա գործունեության առաջին շրջանը կապված է այսպես կոչված «Վիեննական խմբի» հետ, որը կազմակերպվել է 1921 թվականին Վիեննայում։

Տրամաբանական պոզիտիվիզմի առաջին ներկայացուցիչներն են Մ. Շլիկը, Ֆ. Ֆրանկը, Ռ. Կարնապը, Լ. Վիտգենշտեյնը, Հ. Ռեյխենբախը և ուրիշներ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Վիտգենշտեյնը տեղափոխվեց Անգլիա, որտեղ նա պարարտ հող գտավ տրամաբանական պոզիտիվիզմի տարածման համար։ Անգլիայում տրամաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչներն են Ռասսելը, Աերը, Վիսդոմը և ուրիշներ։ Կարնապը, տեղափոխվելով Ավստրիայից ԱՄՆ, լայն ասպարեզ գտավ իր գործունեության համար։ ԱՄՆ-ում այժմ տրամաբանական պոզիտիվիզմը, ի դեմս իր նորագույն տարատեսակի՝ սեմանտիկյան իդեալիզմի, մեծ հովանավորություն է գտնում տիրող շրջանների կողմից։

Ըստ իր իմացաբանական արմատների՝ տրամաբանական պոզիտիվիզմը ներկայացնում է մախիստական տիպի սուբյեկտիվ իդեալիզմ։ Ըստ իր դասակարգային արմատների այն հանդիսանում է ամերիկյան իմպերիալիզմի գաղափարախոսությունը։ Անգլո-ամերիկյան սեմանտիկյան գրչակների խզբզանքներում փորձ է արվում «թեորիապես» արդարացնել ամերիկա-անգլիական բլոկի երկրների ֆաշիզացումը, իմպերիալիստական ագրեսիայի և ժողովուրդների ստրկացման քաղաքականությունը։

Տրամաբանական պոզիտիվիստները իրենց հիմնական նպատակներից մեկը համարում են օբյեկտիվ իրականության ճանաչողության գործում փիլիսոփայության նշանակության կեղծումը։ Նրանք կաշվից դուրս են գալիս ապացուցելու, որ փիլիսոփայության բոլոր պրոբլեմները հանգում են միայն մի հարցի՝ հասարակական կյանքում լեզվի ունեցած դերին։ Ընդ որում, տրամաբանական պոզիտիվիստների առաջնահերթ նպատակը միշտ էլ հանդիսացել է հասարակության զարգացման գործում լեզվի ունեցած դերի կեղծ, հակագիտական, իդեալիստական բացատրությունը։

Տրամաբանական պոզիտիվիզմի լիդերներից մեկը՝ Ռուդոլֆ Կարնապը «The Unity of Science» գրքույկում գրում է, որ յուրաքանչյուր փիլիսոփայական հետազոտություն հանդիսանում է տրամաբանական հետազոտություն, իսկ վերջինս էլ իր հերթին հանգում է լեզվի անալիզին։ Տրամաբանական պոզիտիվիզմի մյուս լիդերը՝ Լյուդվիգ Վիտգենշտեյնը փիլիսոփայության «բոլոր տրադիցիոն պրոբլեմները» համարում է անմտություն։

Տրամաբանական պոզիտիվիստները, առանձնապես ծառանում են փիլիսոփայության հիմնական հարցի լուծման դեմ, ջանում են ցույց տալ, թե կեցության ու գիտակցության փոխհարաբերության հարցը հանդիսանում է «կեղծ պրոբլեմ» և չպետք է լինի փիլիսոփայության ուսումնասիրության առարկա։

Մինչդեռ հայտնի է, թե ինչ հսկայական պրակտիկ նշանակություն ունի փիլիսոփայության հիմնական հարցի՝ կեցության ու գիտակցության փոխհարաբերության ճիշտ լուծումը և այդ լուծման տարածումը հասարակական կյանքի օրինաչափությունների ուսումնասիրման վրա։ Դիալեկտիկական մատերիալիզմը ելնում է այն դրույթից, որ կեցությունը առաջնային է, իսկ գիտակցությունը՝ երկրորդային, ածանցյալ։ Մարքսիստական փիլիսոփայության այդ դրույթը դինում է բանվոր դասակարգին և նրա պարտիային գործողության ռևոլյուցիոն ծրագրով։ «Եթե բնությունը, կեցությունը, նյութական աշխարհն առաջնային է,— գրում է Ի. Վ. Ստալինը,— իսկ գիտակցությունը, մտածողությունը — երկրորդային, ածանցյալ, եթե նյութական աշխարհն

օբյեկտիվ ռեալություն է, որը գոյություն ունի մարդկանց գիտակցությունից անկախ, իսկ գիտակցությունն այդ օբյեկտիվ ռեալության արտացոլումն է, ապա դրանից հետևում է, որ հասարակության նյութական կյանքը, նրա կեցությունը նույնպես առաջնային է, իսկ նրա հոգևոր կյանքը — երկրորդային, ածանցյալ, որ հասարակության նյութական կյանքն օբյեկտիվ ռեալություն է, որը գոյություն ունի մարդկանց կամքից անկախ, իսկ հասարակության հոգևոր կյանքն այդ օբյեկտիվ ռեալության արտացոլումն է, կեցության արտացոլումը։

Նշանակում է, հասարակության հոգևոր կյանքի ձևավորման աղբյուրը, հասարակական իդեաների, հասարակական թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների ծագման աղբյուրը պետք է փնտրել ոչ թե հենց այդ իդեաների, թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների մեջ, այլ հասարակության նյութական կյանքի պայմանների մեջ, հասարակական կեցության մեջ, որի արտացոլումն են այդ իդեաները, թեորիաները, հայացքները և այլն»[1]։

Տրամաբանական պոզիտիվիստների սոփեստական այն աշքակապությունը, թե փիլիսոփայության հիմնական հարցը կեղծ պրոբլեմ է, նպատակ է հետապնդում կապիտալիստական երկրների աշխատավոր մասսաների ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից, հասարակական կյանքի ռևոլյուցիոն վերափոխումից։

Ամերիկյան իմպերիալիզմի տխրահռչակ գաղափարախոս Ստյուարտ Չեյզը ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր հակասությունները, ճգնաժամերի պատճառը փորձում է բացատրել լեզվի ոչ ճիշտ օգտագործումով։ «Քաղաքական և տնտեսական անվերջ դժվարությունները Ամերիկայում,— գրում է նա «The Tyranny of Words»-ում,— ծագել և զարգացել են վատ լեզվի հետևանքով»։

Փիլիսոփայության հիմնական պրոբլեմները, հասարակական կյանքի բարդ երևույթները այսպես կոչված լեզվական պրոբլեմին հանգեցնելը չափազանց տարածված է անգլո-ամերիկյան իդեալիստական փիլիսոփայության զանազան ներկայացուցիչների մոտ։ Ոմն Ռ. Էքստեյն «Հոգեբանության և ամենօրյա կյանքի լեզուն» հոդվածում կեղծ հեգնանքով գրում է, որ շատ փիլիսոփաներ, փոխանակ զբաղվելու լեզվի քերականական պրոբլեմներով, փոխանակ վերլուծելու «լեզվական խճճված ժարգոնները», ուսումնասիրում են կեցության և գիտակցության փոխհարաբերությունը։

Հարց է ծագում՝ ինչու պետք է փիլիսոփայական պրոբլեմների ուսումնասիրությունը փոխարինել լեզվական ժարգոնների ուսումնասիրությամբ։ Պարզվում է, որ Էքստեյնի հայացքների համաձայն, յուրաքանչյուր ազգ ունի իր ազգային փիլիսոփայությունը, որը պայմանավորված է ազգային լեզվի առանձնահատկություններով։ «Փիլիսոփայական մտածողությունը,— գրում է նա «Psychological Review» ամսագրում,— պայմանավորված է լեզվի տրամաբանական ստրուկտուրայով»։ Էքստեյնն ուղղակի հայտարարում է, որ իր խորին համոզմամբ, գերմանական իդեալիստական փիլիսոփայությունը երևան է եկել շնորհիվ գերմաներեն լեզվի և չէր կարող ստեղծվել անգլերեն լեզվով։ Մյուս կողմից, պրագմատիստական փիլիսոփայության արմատները, ըստ Էքստեյնի, գտնվում են անգլերեն լեզվի մեջ։

1 «ՀԱՄԿ(բ)Պ պատմություն», Համառոտ դասընթաց, Հայպետհրատ, 1950, էջ 154։

Նման «բացատրություններով» ամերիկյան իմպերիալիզմի փիլիսոփայող սպասարկուները ճգնում են արդարացնել գերմանական իդեալիստական փիլիսոփայության և անգլո-ամերիկյան պրագմատիզմի ներկայացուցիչների ռեակցիոն սոցիոլոգիական դրույթները։

Հայտնի է, որ Հեգելը հանդիսանում էր գերմանական նացիոնալիզմի գաղափարախոսը և իր գրվածքներում աշխատում էր հիմնավորել Պրուսիայի գերիշխանությունը մյուս երկրների նկատմամբ։ Հեգելի իդեալիստական փիլիսոփայությունը և ռեակցիոն սոցիոլոգիան արմատական քննադատության են ենթարկվել մարքսիզմի հիմնադիրների կողմից, որոնք հեգելյան փիլիսոփայությանը հակադրելով միակ գիտական փիլիսոփայությունը՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը, կատարել են ռևոլյուցիոն հեղաշրջում փիլիսոփայության մեջ։ Միայն ամերիկյան իմպերիալիզմի վարձու սպասարկուները, կուրացած իրենց տերերի տված դոլլարների մշուշով, կարող են հայտարարել, թե այս կամ այն փիլիսոփայական սիստեմի երևան գալը կախված է լեզվի կառուցվածքից, «չնկատելով», որ միևնույն գերմաներեն լեզվով երևան են եկել երկու տրամագծորեն հակադիր փիլիսոփայական սիստեմներ՝ Հեգելի ռեակցիոն փիլիսոփայական սիստեմը և Մարքսի ու Էնգելսի ռևոլյուցիոն փիլիսոփայությունը։

Լեզվի կառուցվածքի և փիլիսոփայության միջև իբր գոյություն ունեցող անմիջական կապի վերաբերյալ իմպերիալիստական ռեակցիոն գաղափարախոսների «փիլիսոփայական կոնցեպցիաներին» մահացու հարված է հասցրնում լեզվի մասին ստալինյան ուսմունքը։ Մարքսիստական ըմբռնման համաձայն, լեզվի քերականական կառուցվածքը մշակված է դարերի ընթացքում և հիմնականում մեծ փոփոխությունների չի ենթարկվում լեզվի կատարելագործման, բարելավման պրոցեսում։ Լեզվի քերականական կառուցվածքը չի լիկվիդացվում այս կամ այն բազիսի լիկվիդացման հետ միասին։ Մինչդեռ հասարակության փիլիսոփայական հայացքները և այդ հայացքներին համապատասխանող հաստատությունները, որպես յուրաքանչյուր վերնաշենքի բաղկացուցիչ մաս, փոփոխվում են բազիսի համեմատ։ Հետևաբար որևէ փիլիսոփայական սիստեմի ծագումը այս կամ այն լեզվի կառուցվածքով բացատրելը հանդիսանում է իդեալիստական, հակագիտական, ռեակցիոն տեսություն։

Հանրահայտ է, որ ժամանակակից Ամերիկայի Միացյալ Նահանգներում գոյություն ունի երկու փիլիսոփայություն՝ ամերիկյան իմպերիալիզմի փիլիսոփայությունը (տարբեր իդեալիստական հոսանքներ՝ պրագմատիզմ, սեմանտիկա, նեոռեալիզմ և այլն) և բանվոր դասակարգի փիլիսոփայությունը՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը, մինչդեռ և՛ ամերիկյան իմպերիալիստները և՛ ամերիկյան բանվորները խոսում են միևնույն անգլերեն լեզվով։

Բանն այնպես ներկայացնելով, թե պրագմատիստական փիլիսոփայության արմատները գտնվում են հենց անգլերեն լեզվի մեջ, ամերիկյան իմպերիալիզմի փիլիսոփայող սպասարկուները փորձում են «թեորիապես» արդարացնել պրագմատիզմը՝ իմպերիալիստական ռեակցիայի փիլիսոփայությունը և ժխտել կամ առնվազն պատահական երևույթ համարել, որ ԱՄՆ-ում ևս գոյություն ունի դիալեկտիկական մատերիալիզմը՝ այն փիլիսոփայությունը, որը

ցույց է տալիս իմպերիալիստական լծից բանվոր դասակարգի ազատագրման միակ ճիշտ ուղին։

Տրամաբանական պոզիտիվիզմի մոլի ջատագով Շարլ Մորիսը «Foundations of the Theory of Signs» գրքույկի մեջ փորձում է հասարակ մարդկանց գիտակցությունը մթագնել իդեալիստական այն զառանցանքով, թե իբր մարդկային քաղաքակրթությունը միայն և միայն կախված է նշաններից և նշանների սիստեմից։

Ամերիկյան լրտեսության և դիվերսիայի տխրահռչակ տեսաբան Հ. Լասվելը իր համախոհների հետ միասին Նյու-Յորքում 1949 թ. լույս է ընծայել մի մեծածավալ գիրք՝ «Քաղաքականության լեզուն» («Language of Politics»), որի մեջ փորձում է ապացուցել, թե այս կամ այն հասարակական ֆորմացիայի սոցիալ-քաղաքական կառուցվածքն ուսումնասիրելու համար կարևոր նշանակություն ունի ոչ թե տվյալ հասարակության տնտեսական կառուցվածքը, այլ այն լեզուն, որով խոսում են քաղաքագետները։

Վ. Ի. Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» հանճարեղ աշխատության մեջ ցույց է տվել, որ փիլիսոփայության կարևորագույն հարցերի լուծման ասպարեզում ոչ մի էական տարբերություն չկա բուրժուական զանազան փիլիսոփայական «իզմերի» միջև։ Դա առանձնապես բացահայտ է դառնում ճշմարտության հարցը քննության առնելիս։

Հայտնի է, որ փիլիսոփայության հիմնական հարցի՝ կեցության և գիտակցության հարցին իրենց տված տարբեր պատասխաններից ելնելով մատերիալիստ փիլիսոփաները և իդեալիստ փիլիսոփաները սկզբունքորեն տարբեր են լուծում ճշմարտության հարցը։ Դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայությունը ելնում է այն դրույթից, որ գոյություն ունի օբյեկտիվ ճշմարտություն, այսինքն մարդկային մտապատկերների մեջ այնպիսի բովանդակություն, «որը կախում չունի սուբյեկտից, կախում չունի ոչ մարդուց, ոչ մարդկությունից»[1]։

Ի հակադրություն իդեալիզմի, որը ժխտում է օբյեկտիվ ճշմարտության գոյությունը, աշխարհի ճանաչողությունը, դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայությունը «...ելնում է այն բանից, որ աշխարհը և նրա օրինաչափությունները միանգամայն ճանաչելի են, որ բնության օրենքների վերաբերյալ մեր գիտելիքները, որոնք ստուգված են փորձով, պրակտիկայով, օբյեկտիվ ճշմարտությունների նշանակություն ունեցող ստույգ գիտելիքներ են...»[2]։

Դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայության այդ դրույթից բանվոր դասակարգի պարտիայի պրակտիկ գործունեության համար բխում են վերին աստիճանի կարևոր հետևություններ։ Եթե բնության զարգացման օրենքների, հասարակական կյանքի օրինաչափությունների մասին եղած մեր գիտելիքները ստույգ գիտելիքներ են, ունեն օբյեկտիվ ճշմարտության նշանակություն, ուրեմն՝

«նշանակում է, պրոլետարիատի պարտիան իր պրակտիկ գործունեության մեջ պետք է ղեկավարվի ո՛չ թե ինչ-ինչ պատահական մոտիվներով, այլ հասարակության զարգացման օրենքներով, այդ օրենքներից բխող պրակտիկ հետևություններով։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 151։

[2] «Համկ(բ)Պ պատմություն», Համառոտ դասընթաց, էջ 151։

Նշանակում է, սոցիալիզմը մարդկության լավագույն ապագայի վերաբերյալ երազից դառնում է գիտություն»[1]։

Օբյեկտիվ ճշմարտության ժխտումը անգլո-ամերիկյան բուրժուական փիլիսոփաների կողմից կատարվում է տարբեր կերպ, սակայն անկախ նրանից, թե ինչ ձևով է այդ կատարվում, այն պայմանավորված է միևնույն դասակարգային արմատներով։ Նրանցից ոմանք, ինչպես, օրինակ, վերոհիշյալ էքստեյնը, հայտարարում են, թե փիլիսոփայությունն ընդհանրապես չպետք է դնի և լուծի ճշմարտության հարցը։ Շարլ Մորիսը գտնում է, որ նրա համար ճշմարտության հարցը ունի պրագմատիստական նշանակություն, այսինքն ճշմարիտ է այն ամենը, ինչ օգուտ է բերում։ «Ամեն նշան,— գրում է Մորիսը «Foundations of the Theory of Signs»-ում,— որը գործում է այդ նշանն օգտագործողի օգտին, համարվում է ճշմարտություն»։

Տրամաբանական պոզիտիվիստ Մորիսի կողմից նման տիպի խոստովանությունը նշանակալից է։ Այն պարզ կերպով ցույց է տալիս, որ փիլիսոփայության կարևորագույն հարցերի մեկնաբանման մեջ բուրժուական փիլիսոփայական զանազան հոսանքների միջև եղած տարբերությունը արտաքին է, թվացող, որ այդ զանազան հոսանքները միևնույն իդեալիստական փիլիսոփայության տարատեսակներն են։

Ժխտելով օբյեկտիվ ճշմարտության գոյությունը, աղավաղված ձևով ներկայացնելով ճշմարտության դերը բնության երևույթների և մասնավորապես հասարակության զարգացման օրինաչափությունների ճանաչման գործում, անգլո-ամերիկյան տրամաբանական պոզիտիվիստները ձգտում են հասարակական կյանքի բարդ երևույթները ներկայացնել որպես քաոսային մի աշխարհ, որտեղ ամեն ինչ կախված է պատահականություններից և աստծո կամքից։ Դրանով իսկ ամերիկյան իմպերիալիզմի այդ գաղափարախոսության սպասարկուները ձգտում են ժխտել այն պատմական անհրաժեշտությունը, որ կապիտալիստական հասարակարգը իր զարգացման ընթացքում անխուսափելիորեն ռևոլյուցիոն ճանապարհով պետք է վերափոխվի, որ սոցիալիզմը անպայմանորեն պետք է փոխարինի կապիտալիզմին։

Հատկանշական է, որ անգամ անգլո-ամերիկյան բուրժուական մամուլը ստիպված է նկատելու սերտ կապը տրամաբանական պոզիտիվիզմի և ֆաշիզմի միջև։ «The New Statesman and Nation» անգլիական շաբաթաթերթը, որը հրատարակվում է Լոնդոնում, 1948 թվականին գրում էր, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տրամաբանական պոզիտիվիզմը նպաստեց ֆաշիզմի տարածմանը անգլիական համալսարանական շրջաններում։

Պատերազմը վերջանալուց հետո ԱՄՆ-ի, Անգլիայի և Ատլանտյան բլոկի մյուս երկրների քաղաքական կյանքի արագ ֆաշիզացման պայմաններում տրամաբանական պոզիտիվիզմը լայն տարածում է գտել այդ երկրներում։

Տրամաբանական պոզիտիվիզմի նորագույն և ամենառեակցիոն տարատեսակն է հանդիսանում այսպես կոչված սեմանտիկյան փիլիսոփայությունը։ Վերջինս աշխատում է տրամաբանական պոզիտիվիզմին տալ լրիվ սոցիոլոգիական բնույթ։

Այս «փիլիսոփայության» հիմնական նպատակն է աշխատավոր մասսաների լայն խավերին խաբել իդեալիստական այն բարբաջանքով, թե իբր դասակարգերի միջև բոլոր տեսակի հակասությունները, սոցիալական անհավա-

[1] «Համկ(ր)Պ պատմություն», համառոտ դասընթաց, էջ 154։

սարությունը, միջազգային հարաբերություններում եղած տարաձայնությունները առաջանում են միմիայն լեզվական դարձվածքների ոչ հիշտ օգտագործման պատճառով։ Հարկավոր է միայն կատարելագործել լեզուն, հասնել այն բանին, որ մարդիկ հասկանան, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ է ցանկանում, և անմիջապես հնարավոր կդառնա կոմպրոմիսը, համաձայնությունը տարբեր սոցիալական խմբերի միջև, հակամարտ դասակարգերի միջև։ Ահա թե ինչպես է շարադրում սեմանտիկների այդ կրեդոն անգլիական սեմանտիկ Ռ. Նորզը ««The Hibbert Journal» ամսագրում հրատարակված «Սեմանտիկան որպես փոխըմբռնման գիտություն» հոդվածում։ «Համարյա այն բոլոր դժբախտությունների համար, որոնցից տառապում է մարդկությունը, մեծ մասամբ մեղքն ընկնում է լեզվի, որպես հաղորդակցության միջոցի, անզոր լինելու վրա։ Միջազգային դիվանագիտության մեջ կասկածամտությունը և փոխադարձ անվստահությունը, հասարակության անիմաստ բաժանումը անտագոնիստական շահեր ունեցող սեկցիոն խմբերի, բնակչության մեջ համաշխարհային արտադրանքի անարդարացի բաշխումը, գործազրկությունը, պետական գործիչների կոպիտ սխալները, ժամանակի ու եռանդի անսահմանափակ ծախսումը և պատերազմի սարսափները,— այս ամենը գլխավորապես, եթե ոչ ամբողջովին, այդ պարզ պատճառի հետևանքն է»։

Սեմանտիկյան այս զառանցանքը հանդիսանում է դասակարգային հասարակության մեջ սոցիալական անհավասարության հին, իդեալիստական բացատրության կրկնումը և ամեն անգամ ասպարեզ է հանվում, երբ բուրժուազիայի վարձկան գաղափարախոսները ցանկանում են աշխատավորների ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից ու «սրբագործել» կապիտալիստական երկրներում տիրող կարգերը։ Դեռևս անցյալ դարի վերջերում ֆրանսիացի Բրենտանոն «Les Sophistes Grecs et les Sophistes Contemporains» գրքում փորձում էր ապացուցել, թե սոցիալական անհավասարությունը առաջանում է լեզվի ոչ բավարար կատարելագործված լինելու հետևանքով, ուստի և անտագոնիստական դասակարգերի բաժանված հասարակությունը վերափոխելու համար, ըստ Բրենտանոյի, ոչ թե պետք է դիմել սոցիալական ռևոլյուցիաների, այլ լեզվական ռեֆորմների։ Բրենտանոն ուղղակի հայտարարում է, որ բոլոր ռևոլյուցիաներն անզոր են եղել պարզելու թեկուզ մի հասկացություն՝ մարդու իրավունքների ճիշտ իմաստը։ «Ոչ միայն գիտությունը,— գրում է նա,— այլև ժողովուրդների բարեկեցությունը ավելի, քան կարելի է պատկերացնել, կախված է կատարելագործված լեզվից»։

Այս «թեորիան» այժմ շատ լայն կիրառում է գտնում անգլո-ամերիկյան բուրժուական փիլիսոփաների և սոցիոլոգների մոտ։ Երբ անհրաժեշտ է լինում բացատրել անտագոնիստական դասակարգերի միջև եղած հակասությունը, միջազգային հարաբերություններում եղած դժվարությունները, իմպերիալիզմի գաղափարախոսներն այդ ամենը աշխատում են պատճառաբանել լեզվի հետ կապված ինչ-ինչ դժվարություններով։

Կարևոր է նշել, որ նման բացատրության դիմում են ոչ միայն բուրժուական փիլիսոփայության ներկայացուցիչները, այլև իմպերիալիզմի պրակտիկ գործիչները։ Սակավ չեն այն դեպքերը, երբ ամերիկա-անգլիական ագրեսիվ բլոկի դիվանագետները իրենց սոփեստական ելույթներում ջանում են մոլորության մեջ գցել հասարակական կարծիքը, հայտարարելով, թե միջազգային քաղաքականության այս կամ այն կարևոր հարցի շուրջը մեծ տերություն-

ները չեն կարողանում համաձայնության գալ, որովհետև իբրև համաձայնեցված տեքստը հնարավոր չէ արտահայտել մեծ տերություններից որևէ մեկի լեզվով։ Այսպես, արտաքին գործերի մինիստրների տեղակալների 1951 թ. Փարիզի խորհրդակցությունում ֆրանսիական ներկայացուցիչ Պարոդին ի վիճակի չլինելով առարկել Գերմանիայի ապառազմականացման վերաբերյալ Սովետական Միության կոնկրետ առաջարկներին, նրանց դեմ իր բռնած դիրքը փորձեց հիմնավորել այն բանով, թե սովետական ձևակերպումները իբր չեն կարող արտահայտվել ֆրանսերեն լեզվով։ Մերկացնելով ֆրանսիական դիվանագետի սեմանտիկյան տիպի այդ սոփեստությունը, Սովետական Միության ներկայացուցիչ ընկ. Գրոմիկոն հայտարարեց. «Ես ավելի բարձր կարծիքի եմ ֆրանսերեն լեզվի՝ Ռուսսոյի, Վոլտերի, Ռոբեսպիերի լեզվի մասին և համոզված եմ, որ այդ լեզվով, ինչպես և ռուսերեն կարելի է արտահայտել ցանկացած միտքը։ Ես չեմ կասկածում, որ եթե մենք պայմանավորվեինք, ինչ արտահայտել, ապա մենք կգտնենք նաև այն հարցի պատասխանը, թե ինչպես արտահայտել այդ երեք լեզուներից յուրաքանչյուրով»։

Սեմանտիկյան նման մեքենայությունների նպատակն է հասարակ մարդկանց գիտակցությունը թունավորել զառանցական այն գաղափարներով, թե փոխանակ ժամանակակից կապիտալիստական աշխարհը ռևոլյուցիոն ճանապարհով վերափոխելու, իբր անհրաժեշտ է սոսկ ռեֆորմ կատարել այս կամ այն լեզվի մեջ և դրանով իսկ կանհետանան ամեն տեսակի սոցիալական հակասությունները և միջազգային հարաբերություններում եղած բարդությունները։ Սրանումն է կայանում իդեալիստական այս թեորիայի դասակարգային էությունը։

Նման «փիլիսոփայությունը» միանգամայն համապատասխանում է ամերիկա-անգլիական ագրեսիվ բլոկի ոգեշնչողների շահերին և անմիջական հովանավորություն է գտնում նրանց կողմից։

Շնորհիվ մոնոպոլիստական տերերի օգնության և հովանավորության, սեմանտիկյան «փիլիսոփայությունը» այժմ վայնորեն տարածվել է իմպերիալիստական բլոկի երկրներում։ Ստեղծված են սեմանտիկյան ընկերություններ, հրավիրվում են սեմանտիկների կոնգրեսներ, հրատարակվում են սեմանտիկային նվիրված բազմաթիվ գրքեր, ինչպես նաև հատուկ սեմանտիկյան ամսագրեր, 25 կոլեջներում և համալսարաններում ավանդվում է սեմանտիկային նվիրված հատուկ դասընթաց։

Սեմանտիկյան բազմաթիվ գրչակներ ծախու մամուլի միջոցով փորձում են ցույց տալ սեմանտիկայի՝ որպես ժամանակակից կապիտալիստական աշխարհի բարելավման «հզոր» միջոցի, դերը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Այդ մասին են քարոզում Ա. Շերբենոյի «Ընտանիքի սեմանտիկյան դաստիարակությունը», Ֆ. Չիսհոլմի «Ընդհանուր սեմանտիկայի կիրառումը ընթերցանության կանոնների նկատմամբ», Ս. Նաթանի «Ընդհանուր սեմանտիկան գործնական աշխարհում», Պ. Լոուվենի «Ընդհանուր սեմանտիկան ամենօրյա կյանքում» և այլ աշխատություններ։

Սեմանտիկյան փիլիսոփայության ներկայացուցիչները չեն ժխտում, այլ ուղղակի հայտարարում են, թե իրենք հանդիսանում են մախիզմի հետևորդները։ «Ընդհանուր սեմանտիկան,— գրում է ամերիկյան մոլեռանդ սեմանտիկ Ռապոպորտը «Dialecticai Materialism and General Semantica» հոդվածում,—

հանդիսանում է պոզիտիվիստական և էմպիրիոկրիտիկական հոսանքների տրամաբանական արդյունքը»։

«Ընդհանուր սեմանտիկայի» հիմնադիր լեհական փախստական կոմս Կորժիբսկու կողմից հռչակված սկզբունքները պարզ կերպով ցույց են տալիս ամերիկյան այս գաղափարախոսության սուբյեկտիվ-իդեալիստական բնույթը։

«Ընդհանուր սեմանտիկայի» առաջին սկզբունքը հիմնված է օբյեկտիվ իրականության իրերի և երևույթների ժխտման վրա, այդ առարկաների և նրանց մտավոր պատկերը հանդիսացող հասկացությունների հակադրման վրա, հասկացությունները կամայական պայմանական նշաններ հայտարարելու վրա։

Ըստ «ընդհանուր սեմանտիկայի» երկրորդ սկզբունքի, առարկաների մասին ամեն ինչ չէ, որ կարելի է արտահայտել բառերի միջոցով։ Այս «սկզբունքը» հիմնված է լեզվի և մտածողության իդեալիստական հակադրման վրա, լեզուն մտածողությունից անջատելու և առանց լեզվի մտածողություն քարոզելու վրա, մի բան, որ մինչև վերջ մերկացված է Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ։

Ի. Վ. Ստալինը ցույց է տալիս, որ Մառը լեզուն անջատելով մտածողությունից և քարոզելով մտածողությունն առանց լեզվական մատերիայի, առանց լեզվական թաղանթի, ընկնում է իդեալիզմի ճահիճը։ «Ինչպիսի մտքեր էլ ծագեն մարդու գլխում և երբ էլ ծագեն,— բացատրում է Ի. Վ. Ստալինը,— դրանք կարող են ծագել ու գոյություն ունենալ միմիայն լեզվական նյութի բազայի վրա, լեզվական տերմինների ու ֆրազների բազայի վրա։ Լեզվական նյութից զերծ, լեզվական «բնական մատերիայից» զերծ մերկ մտքեր գոյություն չունեն»[1]։

Սեմանտիկները, քարոզելով սուբյեկտիվ-իդեալիստական այն դրույթը, թե բառերը իբր չեն կարող արտահայտել ամեն մի միտք, մեծադղորդ կերպով հայտարարում են, թե իրենք իբր «ազատագրել են բանականությունը բառերի բռնակալությունից»։

Ըստ «ընդհանուր սեմանտիկայի» երրորդ սկզբունքի, որքան շատ ենք մենք ստեղծում աբստրակտ հասկացություններ, իբր այնքան ավելի ենք հեռանում իրականությունից։ Պրոֆ. Ֆր. Չիսհոլմը «Introductory Lectures of General Semantics» գրքում ոչ առանց ցինիզմի գիմում է իր ընթերցողներին, կոչ անելով՝ «ընդհանրացրեք ամեն բան, ինչ ցանկանում եք, բայց մի հավատացեք այն բառերին, որոնք դուք օգտագործում եք»։

Քարոզելով սկզբունքային հակադրություն առարկաների և հասկացությունների միջև, սեմանտիկները փորձում են վերակենդանացնել և տարածել էմպիրիոսիմվոլիզմը։ Ստ. Չեյզը սեմանտիկայի հիմնական սկզբունքներից մեկը համարում է այն, որ մարդկանց կողմից օգտագործվող բառերը որպես այդպիսիք ոչ մի նշանակություն չունեն և ստանում են այս կամ այն իմաստը ըստ հանգամանքների։ «Բառերը որպես այդպիսիք,— գրում է նա,— ոչ մի բան չեն նշանակում,— նրանք հանդիսանում են այնպիսի սիմվոլներ, ինչպիսիք են x-ը կամ y-ը»։

Վ. Ի. Լենինը, քննադատելով սիմվոլների թեորիայի ներկայացուցիչ Հելմհոլցին, ռուս մախիստ Բազարովին, ինչպես նաև Պլեխանովի սխալները այս

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը։ Հայպետհրատ, 1952, էջ 89։

հարցում, նշում է, որ «պայմանական նշանը», սիմվոլը հիերոգլիֆը տանում են դեպի ագնոստիցիզմ և իդեալիզմ։

Սեմանտիկների քարոզը հասկացությունների՝ որպես մաթեմատիկական սիմվոլների մասին, հանդիսանում է մախիստական տիպի սուբյեկտիվ իդեալիզմ։

Մարքսիզմի փիլիսոփայությունը ցույց է տալիս, որ հասկացությունները հանդիսանում են օբյեկտիվ իրականության իրերի և երևույթների արտացոլումը մարդու գիտակցության մեջ։ Կազմելով որևէ հասկացություն, մենք մտովին վերանում ենք առարկայի ոչ էական հատկանիշներից և ընդհանրացնում այն հատկանիշները, որոնք բնութագրում են առարկան, ցույց են տալիս նրա որակական որոշակիությունը, նրա ներքին կառուցվածքը։ Հենց այդ պատճառով էլ հասկացությունը մեզ գաղափար է տալիս առարկայի էության մասին։ Ամեն մի հասկացության կազմավորման պրոցեսը սերտորեն կապված է աբստրահման և ընդհանրացման հետ։ Հասկացությունները անվանելով պայմանական նշաններ, սեմանտիկները բացասում են աբստրահման ճանաչողական նշանակությունը։ «Որքան բարձր է աբստրահումը, այնքան մեծ է վտանգը»,— հայտարարում է սեմանտիկ Չեյզը։

Ըմբոստանալով ընդհանրացման դեմ, մարդկային մտածողության աբստրահող գործողության դեմ, սեմանտիկյան կեղծ փիլիսոփայությունը զրանով իսկ ծառանում է գիտության դեմ, օբյեկտիվ իրականության զարգացման օրինաչափությունների ճանաչման դեմ, քանի որ առանց կոնկրետ և մասնավոր երևույթներից աբստրահվելու, առանց ընդհանրացման չի կարող լինել ո՛չ գիտություն և ո՛չ էլ օբյեկտիվ իրականության ճշմարիտ ճանաչում։ «... Արդեն ամենապարզ ընդհանրացումը,— գրում է Վ. Ի. Լենինը,— հասկացությունների (դատողությունների, եզրակացությունների etc) առաջին և ամենապարզ կազմավորումը նշանակում է աշխարհի ավելի և ավելի խոր օբյեկտիվ կապերի ճանաչումը մարդու կողմից»[1]։

Սուբյեկտիվ իդեալիզմի քարոզը սեմանտիկների կողմից հաճախ տարվում է բացահայտ ռեյյատիվիզմի ձևով։ Սեմանտիկների «E. T. C.» ժուռնալը որպես աֆորիզմ բերում է հետևյալ արտահայտությունը՝ «Մենք տեսնում ենք իրերը ոչ այնպես, ինչպիսին են նրանք, այլ այնպես, ինչպիսին ենք մենք»։ «Word Magic and Logical Analysis in the Field of Ethics» հոդվածում Ե. Ադամսը փորձում է ապացուցել, որ բառերի իմաստը որոշելու համար պետք է այդ բառերը ոչ թե հարաբերության մեջ դրվեն այն առարկաների հետ, որոնց նրանք վերաբերվում են, այլ միայն այն նպատակի հետ, որին ձգտում է հասնել այդ բառերն օգտագործող անձը։

Այս ռեյյատիվիստական սկզբունքից անխուսափելիորեն բխում են նաև գնոսեոլոգիական հետևությունները, թե յուրաքանչյուր բառ իրը ձեռք է բերում այնքան նշանակություն, որքան անգամ այն օգտագործվում է։ Անգլիական «Mind» ժուռնալում Վ. Ստեյսը գրում է, որ բոլոր գիտությունները, ինչպես և բառերի նշանակությունը միշտ էլ ինդիվիդուալ են։ Ըստ սեմանտիկների, յուրաքանչյուր մարդ իր հայեցողությամբ կարող է այս կամ այն նշանակությամբ օգտագործել բառերը, իսկ հաջողությունը սոսկ կախված է այն հանգամանքից, թե բառերով ինչպիսի մանիպուլյացիաներ է ընդունակ կատարելու այս կամ այն անձը։ «Քաղաքականության ասպարեզում հաջող գործողությունները,—

[1] В. И. Ленин. Философские тетради. Огиз, 1947, стр 153.

պնդում է Տուրման Առնոլդը,— հիմնված են սիմվոլների հետ կատարած հաջող մանիպուլյացիաների վրա»։

Քաղաքականության հետ սեմանտիկյան մանիպուլյացիաների կապի մասին Առնոլդի խոստովանությունը պատահական չէ։ Սեմանտիկյան իդեալիզմը սերտորեն առնչվում է ամերիկյան իմպերիալիզմի ավազակային քաղաքականության հետ և հանդես է գալիս որպես վերջինիս «թեորիական» հիմնավորումը։

Սեմանտիկյան «E. T. C.» ժուռնալի խմբագրի օգնական Ռապոպորտը ուղղակի հայտարարում է, թե «ընդհանուր սեմանտիկայի» գլխավոր խնդիրներից մեկը քաղաքականությամբ զբաղվելն է։ Վերին աստիճանի հատկանշական է, թե սեմանտիկները ինչպես են զբաղվում քաղաքական հարցերի լուսաբանմամբ, միջազգային դրության և պետությունների դիվանագիտական հարաբերությունների գնահատմամբ։

Եթե հավատանք սեմանտիկներին, ապա կստացվի, թե մեծ տերությունների միջև եղած հակասությունները առաջանում են միայն և միայն այնպիսի բառերի պատճառով, որոնք ոչ մի կայուն իմաստ չունեն, հետևաբար, ըստ սեմանտիկների, մեծ տերությունների միջև եղած տարաձայնությունների հիմքում ընկած են ոչ թե էկոնոմիկական, քաղաքական պատճառներ, այլ... լոկ լեզվական դժվարություններ։

Սեմանտիկները աշխատում են իրենց «ուսմունքը» դարձնել հասարակ մարդկանց գիտակցությունը մթագնելու, ժողովրդական մասսաներին ամերիկյան իմպերիալիզմի համար թնդանոթի միս դարձնելու միջոց։ Նրանք հասարակ մարդկանց համառորեն խորհուրդ են տալիս չմտածել արտաքին քաղաքականության մասին, ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիաների մասին, որևէ գնահատական չտալ ուոլ-ստրիտի այս կամ այն քաղաքական ակտին։ Նրանք ցանկանում են հասարակ մարդկանց համոզել, որ եթե վերջիններս դադարեն խորհել միջազգային հարաբերությունների բնագավառում ԱՄՆ-ի կամ Անգլիայի գործողությունների մասին, ապա վերջին տարիների լարվածությունը կանհետանա։ Այս կապակցությամբ հատկանշական է Չիկագոյի համալսարանի հոգեբանության «պրոֆեսոր» Կ. Ռոջերսի 1952 թ. հրատարակած «Communication: its Blocking and its Facilitation» հոդվածը, որտեղ նա պնդում է, թե մարդկանց փոխհարաբերությունների մեջ խոշոր արգելակ է անձնավորությունների կամ խմբերի պնդումների, հերքման, ապացուցման կամ գնահատման մեր խիստ բնական ցանկությունը։

Որպես մարդու բանական գործողությանը հասցվող հսկայական վնասի օրինակ հիշյալ «պրոֆեսորը» միջազգային հարաբերությունների ասպարեզից հիշատակում է Յապոնիայի հետ ԱՄՆ-ի կնքած ապօրինի «հաշտության» պայմանագրին Սովետական Միության և սովետական մարդկանց տված այն ճիշտ գնահատականը, որ այդ պայմանագիրը հանդիսանում է նոր պատերազմի ու ագրեսիայի գործիք։

Ամերիկյան իմպերիալիզմի դիպլոմավորված փիլիսոփաները ցանկանում են, որ իրենց տերերի ագրեսիվ գործողությունները չմերկացվեն խաղաղության կողմնակիցների կողմից, չստանան արդարացի գնահատական աշխարհի հասարակ մարդկանց կողմից։ Ահա թե ինչու Ռոջերսը և նրա համախոհները հասարակ մարդկանց կոչ են անում հրաժարվել կառավարությունների այս կամ այն քայլի գնահատման ունակությունից, այս կամ այն թեզի ապացուցման կամ հերքման ընդունակություններից։

Սարսափ սեփական ժողովրդի հանդեպ — ահա թե ինչն է բնորոշ ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցիչների համար, ահա թե ինչն է, որ վերջին հաշվով արտացոլված է իմպերիալիստական ռեակցիայի փիլիսոփայության մեջ։

Ամերիկա-անգլիական բլոկի արտաքին քաղաքականության ոգեշնչողների ձգտումը՝ իրենց գործողություններն ու ծրագրերը թաքցնել առաջին հերթին սեփական ժողովրդից, պատահմամբ մատնել է Լոնդոնում հրատարակվող «The New Statesman and Nation» բուրժուական շաբաթաթերթը դեռևս 1948 թ. իր մի առաջնորդող հոդվածում, որը հետևյալ հատկանշական վերնագիրն է կրում՝ «Գաղտնի դիվանագիտության անհրաժեշտությունը»։ «Նախ և առաջ,— գրել է թերթը,— անհրաժեշտ է վերադառնալ գաղտնի դիվանագիտությանը։ Բացահայտ դիվանագիտության ոչ մի ողջամիտ պաշտպան երբեք չի պնդել, որ մեծ տերությունների միջև բարդ և մանրամասն դիսկուսիաները տեղի ունենան հրապարակորեն։ Գուցե հենց դրա հետևանքն է արդեն հանդիսանում այն, որ արտաքին գործերի մինիստրները ավելի շատ դիմում են իրենց հասարակությանը, քան անդրադառնում դիսկուսիայի առարկային, և այն, որ բանակցությունները վարվում են այնպիսի իրադրության մեջ, երբ մամուլի ու ռադիոյի պրոպագանդան, տարածվելով մի մայր ցամաքից մյուսը, հենց սկզբից ստեղծում է կանխակալ կարծիքի մթնոլորտը»։

Բայց մեր ժամանակներում անհնար է լուծել միջազգային քաղաքականության հիմնական հարցերը ժողովուրդներից գաղտնի, որովհետև անհնար է այդ հարցերի լուծումը առանց Սովետական Միության մասնակցության, իսկ Սովետական Միությունը, որպես խաղաղության և ժողովուրդների համագործակցության պաշտպան, որպես աշխատավոր մասսաների շահերի արտահայտիչ, չի կարող հանդես գալ իմպերիալիստական պետությունների կոմպանիոնի դերում՝ նրանց գաղտնի դիվանագիտության մեջ։ Ստիպված լինելով հրապարակորեն հանդես գալ միջազգային քաղաքականության հարցերի շուրջը, իմպերիալիստական պետությունների ներկայացուցիչները ՄԱԿ-ում որպես կանոն միշտ էլ ամենաստոր ստի և սոփեստությունների են դիմում, որպեսզի քողարկեն իրենց գործողություններն ու ծրագրերը։ «Ատլանտյան բլոկի պարագլուխների կողմից դեմագոգիկ խաղաղասիրական ֆրազեոլոգիայով ագրեսիվ պլանների և արդեն տեղի ունեցող պատերազմական գործողությունների քողարկումը,— նշում է ընկ. Գ. Մալենկովը իր հաշվետու զեկուցման մեջ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XIX համագումարում,— կազմում է նրանց քաղաքականության բնորոշ գիծը։ Բանն այն է, որ այժմ այնքան էլ հեշտ չէ ժողովուրդներին, որոնք նորերս հենց ճանաչեցին արյունահեղ պատերազմական գործողությունների ամբողջ ծանրությունը, քշել դեպի նոր պատերազմ, դեպի պատերազմ ընդդեմ խաղաղասեր ժողովուրդների։ Այստեղից են ագրեսիվ ատլանտյան գայլի՝ ոչխարի մորթի հագնելու այդ ջանքերը»[1]։

Ջանազան խարդախ սոփեստությունների միջոցով իմպերիալիզմի փիլիսոփայող զինակիրները՝ սեմանտիկյան իդեալիստները ճգնում են հասարակ մարդկանց խաբել, թե ժամանակակից միջազգային դրության լարվածության

[1] Գ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարին ՀԱԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին., Հայպետհրատ, 1952, էջ 27։

վերացման միակ արմատական միջոցը սեմանտիկների դեղատոմսերին հետևելն է, այսինքն այս կամ այն քերականական դարձվածքների փոխարինումը այլ քերականական դարձվածքներով, այս կամ այն հասկացության փոխարինումը մի այլ հասկացությամբ։

Միջազգային հարաբերություններում «ընդհանուր սեմանտիկայի» ունեցած դերին հատկապես նվիրված է Ջ. Լունդենբերգի «Սեմանտիկան միջազգային հարաբերություններում» հոդվածը։ «Տեսականորեն» ամփոփելով անգլո-ամերիկյան դիվանագիտության փորձը, Լունդենբերգը հանգում է այն եզրակացության, որ «այն շրջանակները, որտեղ կատարվում են միջազգային քաղաքականության ընթացիկ քննարկումները, լավագույն դեպքում հիմնված են վիճաբանության ռեալ առարկայի անտեսման և վատթարագույն դեպքում՝ ինտելեկտուալ խարդախության վրա»։

Ըստ հոդվածի հեղինակի, ինչպես և ընդհանրապես սեմանտիկյան իդեալիստների, միջազգային քաղաքականության շուրջը տեղի ունեցող բոլոր վիճաբանությունները կատարվում են երկիմաստ տերմիններով։ Դրա պատճառը այն է, պնդում են նրանք, որ շատ հասկացություններ չեն համապատասխանում այն իրադրությանը, որի շուրջը վիճում են։ Ի՞նչ հասկացություններ են դրանք։ Նախ և առաջ՝ հասարակական-քաղաքական երևույթներին վերաբերող հասկացությունները։ Տխրահռչակ Ստ. Զեյզը թվարկում է այն հասկացությունները, որոնցից, իր կարծիքով, անհրաժեշտ է առանց հապաղելու հրաժարվել։ Դրանք են՝ «սեփականության բացակայություն», «հավելյալ շահույթ», «դասակարգային պայքար», «արտադրության միջոցների մասնավոր սեփականություն», «մասսաների շահագործում», «իմպերիալիզմ», «պրոլետարիատ», «բուրժուազիա», «շահույթի սիստեմ» և այլն։ «Ռեալ աշխարհում գոյություն չունի շահույթի ոչ մի սիստեմ»,— հայտարարում է ամերիկյան մոնոպոլիաների այդ լաքեյը։ Ըստ նրա, գոյություն չունի և կապիտալ։ Կապիտալը միայն դատարկ բառ է, ցանկանում է հավատացնել Զեյզը։ Փորձեցեք, ասում է նա, լուսանկարել կապիտալը գործողության մեջ։ Զեյզը կաշվից դուրս գալով փորձում է հավատացնել, թե դա հնարավոր չէ, թե «կապիտալ» հասկացությանը կյանքում ոչինչ չի համապատասխանում, թե «կապիտալ» հասկացության համար անհնարին է գտնել «ռեֆերենտ», որ կապիտալը՝ դա ֆիկցիա է։

Խաբել մասսաներին, նրանց գիտակցությունը թունավորել այն կեղծիքով, թե անհնարին է պայքարել կապիտալի՝ որպես գոյություն չունեցող երևույթի դեմ,— ահա որտեղ են Զեյզի իդեալիստական ձեռնածությունների արմատները։ «Ֆաշիզմ» հասկացությանը ոչինչ չհամապատասխանելու պրոպագանդայով Զեյզը հանդես է եկել դեռ ֆաշիստական բռնակալության դեմ իսպանական ռեսպուբլիկաների մղած պայքարի տարիներին։ Միանգամայն իրավացի է ամերիկյան պրոֆեսոր Դանհեմի այն պնդումը, որ Զեյզի ձեռնածությունները «ֆաշիզմ» հասկացության մասին նպատակ ունի ջլատել ֆաշիզմի դեմ պայքարելու կամքը։

Իր կեղծ թեզիսը այն մասին, թե ընդհանուր հասկացություններին իրականության մեջ ոչինչ չի համապատասխանում, Զեյզը հետևյալ ձևով է «փաստարկում»։ Կանչեցեք՝ «է՛յ, մարդկություն», և ոչ ոք չի արձագանքի ձեզ. հետևապես, եզրակացնում է Զեյզը, «մարդկություն» հասկացությանը, ինչպես և մյուս ընդհանուր հասկացություններին չի համապատասխանում ոչ մի ռեֆե-

ռենտ, հետևապես իրականության մեջ գոյություն չունի այնպիսի երևույթ, ինչպիսին է մարդկությունը։

Մերկացնելով Չեյզի ձեռնածությունները և ծաղրելով նրան, պրոֆ. Դանհեմը միանգամայն իրավացիորեն նկատում է, որ նույն «հաջողությամբ» կարելի է բացականչել՝ «է՜յ, Միացյալ Նահանգների բանակ, ե՛կ այստեղ», և ոչ մի զինվոր չի արձագանքի, բայց դրանից չի հետևում, որ գոյություն չունի Ամերիկայի Միացյալ Նահանգների բանակը, չնայած Ուոլ-ստրիտի գաղափարախոսները՝ Չեյզը և նրա համախոհները շատ կցանկանային իրենց սոփեստություններով խաբել հասարակական կարծիքը, թե «Միացյալ Նահանգների բանակ» հասկացությանը իրականում իբր ոչինչ չի համապատասխանում։

Անգլո-ամերիկյան սեմանտիկներն իրենց խավարամոլությունը «ընդհանուր սեմանտիկա» անվան տակ մեծադղորդ կերպով հայտարարում են ճանաչողության ընդհանուր մեթոդ, որը իբր հավասարապես կիրառվում է գիտության և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Սեմանտիկյան «E. T. C.» ամսագրի գլխավոր խմբագիր Հայակավան «Ընդհանուր սեմանտիկայի նպատակը և խնդիրները» հոդվածում գրում է, որ «ընդհանուր սեմանտիկան գիտություն է գիտության մեթոդի մասին»։ Հայակավան ճգնում է համոզել իր ընթերցողներին, թե գիտության բնագավառում, ամենօրյա կյանքում և քաղաքականության ասպարեզում, առանձին մարդկանց, խմբերի, դասակարգերի միջև եղած տարաձայնությունները և անախորժությունները կվերանան ու ընդհանուր վստահություն կտիրի միայն այն ժամանակ, երբ մարդիկ բավականաչափ տիրապետեն ընդհանուր սեմանտիկային որպես մեթոդի։ Ընդհանուր սեմանտիկան հանդիսանում է օգտակար մեթոդ իրավունքի բնագավառում, հայտարարում է Պիրսոնը «Ընդհանուր սեմանտիկան և իրավունքը» հոդվածում։ Շարլ Մորիսը բազմաթիվ սոփեստությունների միջոցով փորձելով ապացուցել, թե «քաղաքակրթությունը կախված է միայն նշաններից (սիմվոլներից) և նշանների սիստեմից», հանգում է իր ցանկացած եզրակացությանը՝ «սեմանտիկան ունի կրկնակի առնչություն գիտության հետ, այն գիտություն է գիտությունների շարքում և միևնույն ժամանակ գործիք է գիտությունների համար»։

Ամերիկյան իմպերիալիզմի այս բոլոր գրչակների նպատակն է իրենց հորինվածքներում ապացուցել, թե հասարակության զարգացման պրոցեսում չկա ոչ մի էկոնոմիկական օրինաչափություն, թե հասարակության բախտը կախված է լոկ լեզվական դարձվածքների, բառերի այս կամ այն օգտագործումից, որով և զբաղվում է սեմանտիկան որպես մեթոդ։ Տրամաբանական պոզիտիվիզմի պարագլուխներից մեկը, ատոմային ռումբի գաղափարախոս Բերտրան Ռասսելը քիչ թուղթ և թանաք չի վատնել, որպեսզի իր ընթերցողներին խաբի, թե հասարակության պատմությունը իրենից իբր ներկայացնում է մի բաոս՝ զուրկ զարգացման էկոնոմիկական ամեն օրինաչափություններից, և եթե կա որևէ օրինաչափություն, ապա դա իբր պատերազմների, իբար ոչընչացնելու բնազդն է մարդկանց մոտ։

Հենց այդ են պահանջում ամերիկյան մոնոպոլիստների շահերը, որոնք ցանկանում են հասարակ մարդկանց մեջ տեսնել իրենց տերերին հպատակ, բնազդով գործող կենդանիների, պատրաստ՝ դառնալու թնդանոթի միս, միայն թե կապիտալիստները ստանան առավելագույն շահույթ։

Արդարացնելով ագրեսիայի և պատերազմների, իմպերիալիստական էքս-

պանսիայի քաղաքականությունը, երկինք բարձրացնելով վայրենի բնազդների կուլտը, անգլո-ամերիկյան սեմանտիկների կեղծ փիլիսոփայությունը հանգում է ճանաչողության պրոցեսում բանականության դերի անվերապահ ժխտմանը, ամենավատ տեսակի իռացիոնալիզմի։

Սեմանտիկյան իդեալիստները տրամաբանական մտածողության թշնամիներն են։ Որոշ դեպքերում հազիվ քողարկված, այլ դեպքերում ցինիկ սանձարձակությամբ նրանք իսկական արշավանք են հայտարարում տրամաբանական մտածողության դեմ։ Տրամաբանության դեմ իրենց պայքարը սեմանտիկները հաճախ մղում են Արիստոտելի տրամաբանության դեմ պայքարելու քողի տակ։ Եվ դա հասկանալի է։ Հայտնի է, որ ըստ Ֆ. Էնգելսի բնութագրման, Արիստոտելն ուսումնասիրել է դիալեկտիկական մտածողության ամենաէական ձևերը։ Վ. Ի. Լենինը, խոսելով Արիստոտելի տրամաբանության մասին, նշել է, որ Արիստոտելի մոտ միշտ էլ նկատելի է օբյեկտիվ տրամաբանությունը։ Դրանով իսկ Վ. Ի. Լենինը ընդգծել է Արիստոտելի տրամաբանության հիմնականում մատերիալիստական բնույթը։

Անգլո-ամերիկյան սեմանտիկների պայքարը արիստոտելյան տրամաբանության դեմ՝ պայքար է մատերիալիզմի դեմ ընդհանրապես և տրամաբանական մտածողության ձևերի և օրենքների մատերիալիստական բացատրության դեմ՝ մասնավորապես։ Մտածողության ձևերը, տրամաբանության կատեգորիաները Արիստոտելը ոչ թե հակադրում է օբյեկտիվ իրականությանը, այլ կապում է վերջինիս հետ։ Դրանումն է կայանում անտիկ աշխարհի մեծ փիլիսոփայի արժանիքներից մեկը, քանի որ մտածողության ձևերի և օրենքների մատերիալիստական մեկնաբանությունը ելնում է նրանից, որ այդ ձևերն ու օրենքները ոչ թե տարբերվում և առավել ևս ոչ թե հակադրվում են կեցության ձևերին, բնության օրենքներին, այլ լրիվ նմանվում են վերջիններիս։

Դիալեկտիկական մատերիալիզմը բացատրում է, որ մտածողության օրենքները, տրամաբանության ֆիգուրները արտահայտում են մեր գիտակցությունից անկախ գտնվող իրերի և երևույթների միջև եղած ամենապարզ հարաբերությունները։ Հենց դրա դեմ են պայքարում անգլո-ամերիկյան սեմանտիկները և նրանց համախոհները՝ տրամաբանության հարցերին նվիրված իրենց հերյուրանքներում։

Ցանկանալով հերքել մատերիալիզմը տրամաբանության հարցերում, անգլո-ամերիկյան իդեալիստ փիլիսոփաները հասկացությունը համարում են ոչ թե օբյեկտիվ իրականության առարկաների էական հատկանիշների արտացոլումը մեր գիտակցության մեջ, այլ լոկ տառերի միակցություն, իսկ դատողությունը ոչ թե մեզ շրջապատող բնության իրերի ու երևույթների և նրանց միջև եղած հարաբերությունների արտացոլումը մեր գիտակցության մեջ, այլ սոսկ հասկացությունների միակցություն։ «Տառերի որոշ կոմբինացիա,— գրում է ոմն Կետսոֆ Նյու-Յորքում հրատարակվող «Philosophy and Phenomenological Research» ամսագրում,— կազմում են բառեր, բառերի որոշ կոմբինացիաները կազմում են նախադասություններ և սրանցից մի քանիսը հետագայում տարբերվում են որպես դատողություններ։ Դատողությունների կոմբինացիաները տալիս են մեզ ավելի բարդ դատողություններ։ «Տառերը», «բառերը» և «նախադասությունները» իրենց բնույթով հիմնականում սիմվոլիկ են»։ «Տրամաբանությունը՝ դա մանիպուլյացիա է բառերի հետ»,— հայտարարում է Չեյզը։ Տրամաբանության մեջ կատարյալ խառնաշփոթություն է քարոզում

ԳՐԱԴԱՐԱՆ

Կարնապը, պնդելով, թե տրամաբանության օրենքները սուբյեկտիվ են, կախված են մարդու կամքից ու ցանկություններից, թե յուրաքանչյուր մարդ ըստ իր քմահաճույքների կարող է դեն շպրտել տրամաբանական մտածողության այս կամ այն օրենքը և ստեղծել իր համար նոր օրենքներ։

Դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայությունը մինչև վերջ մերկացնում է ամերիկյան իմպերիալիզմի վարձկան փիլիսոփաների խավարամոլությունը նաև տրամաբանության հարցերում։ Բացահայտելով մտածողության օրենքների և ձևերի բնույթը, Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ տրամաբանության օրենքները, ձևերը, ֆիգուրները, մոդուսները ու մյուս կատեգորիաները հանդիսանում են օբյեկտիվ իրականության, իրերի և երևույթների միջև եղած պարզ հարաբերությունների արտացոլումը մարդու գիտակցության մեջ։ «...Մարդու պրակտիկան,— նշում է Վ. Ի. Լենինը,— միլիարդավոր անգամ կրկնվելով ամրանում է մարդու գիտակցության մեջ տրամաբանության ֆիգուրների ձևով։ Այդ ֆիգուրներն ունեն նախապաշարմունքի կայունություն, աքսիոմատիկ բնույթ հենց (և միայն) այդ միլիարդավոր կրկնումների շնորհիվ»[1]։

Տրամաբանության օրենքները և ձևերը ոչ միայն չեն կարող փոխվել այս կամ այն փիլիսոփայող սուբյեկտի քմահաճույքով, ինչպես այդ մասին հայտարարում է սեմանտիկ Կարնապը, այլև հիմնականում չեն փոխվում և մի շարք պատմական դարաշրջանների ընթացքում։ Նման լեզվին, այդ ձևերն ու օրենքները մեր մտածողության համար իրենց ուժը պահպանում են անկախ հասարակական ֆորմացիաների փոփոխություններից։ Նրանք հանդիսանում են բոլոր մարդկանց համար նույնը՝ անկախ այդ մարդկանց սոցիալական դիրքից, դասակարգային կամ ազգային պատկանելիությունից։

Տրամաբանության օրենքների կամայական բնույթի մասին սեմանտիկյան իդեալիստների քարոզներին մահացու հարված է հասցնում Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» կլասիկ աշխատությունը։ Իր հանճարին հատուկ հստակությամբ Ի. Վ. Ստալինը ցույց է տալիս, որ գիտության օրենքները (նշանակում է՝ այդ թվում նաև տրամաբանության օրենքները) ունեն օբյեկտիվ բնույթ, հանդիսանում են մեզնից անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ օրինաչափությունների արտացոլումը մարդկանց գլխում։ «Մարդիկ,— բացատրում է Ի. Վ. Ստալինը,— կարող են հայտնագործել այդ օրենքները, ճանաչել դրանք, ուսումնասիրել դրանք, հաշվի առնել դրանք իրենց գործողություններում, օգտագործել դրանք հօգուտ հասարակության, բայց նրանք չեն կարող փոխել կամ վերացնել դրանք։ Նրանք առավել ևս չեն կարող սահմանել կամ ստեղծել գիտության նոր օրենքներ»[2]։

Տրամաբանական մտածողության դեմ իրենց պայքարում անգլո-ամերիկյան սեմանտիկները հասնում են այն բանին, որ անխտիր բացասում են տրամաբանության յուրաքանչյուր տարրական օրենք, տրամաբանական մտածողության ամեն մի կանոն։ Այդ մասին ուղղակի հայտարարում են իրենց գրքույկներում սեմանտիկյան իդեալիզմի պարագլուխներ Կորժիբսկին («Science and Sanity»), Չեյսը («The Tyranny of Words») և ուրիշները։ Ժխտելով տրամաբանության ամենատարրական կանոնները, դրանով իսկ սեմանտիկները

[1] В. И. Ленин, Философские тетради, стр. 188.

[2] Ի. Ստալին, Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, Հայպետհրատ, էջ 4։

օրինականացնում են խառնաշփոթությունը, երկիմաստությունը, հակասականությունը մտածողության մեջ։ Եվ դա չի հանդիսանում սոսկ մտահայացողական հիվանդոտ փիլիսոփայություն։ Նման փիլիսոփայությունը ունի իր դասակարգային խոր արմատները, սոցիալական պատճառները։ Միանգամայն իրավացի է պրոֆ. Դանհեմը, որը վերլուծելով անգլո-ամերիկյան սեմանտիկների պայքարը տրամաբանական մտածողության դեմ, իր «Man Against Myth» գրքում «Գրոհ տրամաբանության դեմ» գլխում նշում է՝ «Տրամաբանության դեմ գրոհի սոցիալական պատճառները միանգամայն ակնհայտ են»։ Դանհեմը ցայտուն կերպով նկարագրում է այն պատկերը, որին հասցնում է տրամաբանական մտածողության օրենքների ճանաչողական նշանակության ժխտումը։ «Եթե մենք հրաժարվենք հակասության օրենքից,— գրում է Դանհեմը,— ապա բոլոր դատողությունները կդառնան համարժեք և անհնարին կլինի տարբերել ճշմարիտ դատողությունը կեղծ դատողությունից։ Այդպիսի կոշմարային աշխարհը, ուր դեն շպրտված կլինեն բոլոր ռացիոնալ չափանիշները, լցված կլինի մռայլ ստվերներով և ճռռացող ձայներով։ Դուք չեք կարող մտածել, քանի որ չի լինի մտածողության մեթոդ։ Այնտեղ ամեն ինչ կանհետանա բացի բնազդից։ Այդպես է ուղի հարթվում ֆաշիստական գաղափարախոսությանն արագ անցնելու համար»[1]։

Ամերիկա-անգլիական ագրեսիվ բլոկի ոգեշնչողների սոփեստական անհամար հնարքները, որոնք հիմնված են տրամաբանական մտածողության կանոնների խախտման վրա, բացահայտ կերպով ցույց են տալիս, թե ինչու են սեմանտիկյան իդեալիստները կաշվից դուրս գալիս, որպեսզի արդարացնեն և օրինականացնեն տրամաբանության օրենքների խախտումը։ Բերենք միայն մի օրինակ։

Կորեական Ժողովրդա-Դեմոկրատական Ռեսպուբլիկայի դեմ ամերիկյան ագրեսիայի հարցը ՄԱԿ-ում քննարկվելիս ամերիկյան ներկայացուցիչը այլ սոփեստությունների թվում իր դատողություններում թույլ տվեց նաև հետևյալ աբսուրդ հակասությունը։ Մի կողմից, նա ժխտում էր պետական սահմանների առկայությունը Կորեայում, մյուս կողմից էլ հաստատում էր կորեական մի պետության ագրեսիայի առկայությունը կորեական մյուս պետության դեմ։ Բայց չի կարելի պնդել, թե Կորեայում գոյություն չունեն պետական սահմաններ և միևնույն ժամանակ հայտարարել, թե կորեական մի պետություն, խախտելով պետական սահմանը, հարձակվել է կորեական մյուս պետության դեմ, դրանով իսկ կոպիտ կերպով շմեղանչելով տրամաբանական մտածողության տարրական կանոնների դեմ, հակասության մեջ չընկնելով ինքն իր հետ։

Ամերիկյան դիվանագետի այդ կոպիտ սոփեստական հնարքը մերկացրեց Սովետական Միության դելեգացիայի ղեկավարը։ Հիշեցնելով ագրեսիայի սահմանումը, Ա. Յա. Վիշինսկին ասաց. «Այդ կապակցությամբ պետք է նշել այն հակասությունը, որի մեջ ինքն իր հետ ընկնում է, օրինակ՝ Օստինը, հայտարարելով, թե ըստ էության 38-րդ զուգահեռականը ֆիկցիա է։ Նա ասաց, թե դա իրականություն չէ, թե, ըստ էության, չկա ոչ մի 38-րդ զուգահեռական, թե դա երևակայական, գոյություն չունեցող գիծ է։ Բայց եթե այդ գիծը գոյություն չունի, ապա այն ոչինչ չի բաժանում, իսկ եթե այն ոչինչ չի բաժանում, ապա չկան սահմանագծով իրարից բաժանված Կորեայի երկու մասեր, ապա,

[1] B. Danham, Man Against Myth, Boston, 1947, p. 248.

հետևապես, չկա Կորեայի հյուսիսային մաս, որը պետական սահմանով անջատված լինի հարավային մասից։

Նշանակում է, չկան սահմանով բաժանված երկու պետություններ, քանի որ, պ. Օստինի կարծիքով, չկա ոչ մի սահման։ Հետևաբար, կա մի պետություն։ Բայց այդ դեպքում չի կարելի խոսել մի պետության դեմ մեկ ուրիշի ագրեսիայի մասին, քանի որ չկա երկու պետություն։

Այնինչ պ. Օստինը և նրա համախոհները, ժխտելով սահմանի առկայությունը, ընդունում են պետությունների առկայությունը, մի պետության դեմ մյուսի ագրեսիայի առկայությունը։ Դա ակնհայտ հակասություն է»[1]։

Նման սոփեստությունը պատահական երևույթ չէ ամերիկա-անգլիական ագրեսիվ բլոկի դիվանագետների և ընդհանրապես իմպերիալիզմի ներկայացուցիչների փաստարկներում։

Մարքսիզմի կլասիկները ապացուցել են, որ մահացող դասակարգերի ներկայացուցիչները, հատկապես իմպերիալիստական ռեակցիայի գաղափախոսները իրենց դասակարգային դեմքը, ներքին էությունը քողարկելու և մասսաներին խաբելու ու իրենց ետևից տանելու համար միշտ էլ դիմել և դիմում են տրամաբանական մտածողության տարրական կանոնների գիտակցական խախտման վրա հիմնված ամենաստոր սոփեստություններին։

Վ. Ի. Լենինը ընդգծել է, որ «տրամաբանական հակասություն»,— իհարկե, տրամաբանական ճիշտ մտածողության պայմանով — չպետք է լինի ո՛չ տրնտեսական, ո՛չ էլ քաղաքական անալիզի մեջ»[2]։

Սեմանտիկյան իդեալիզմը իր սուր ծայրով ուղղված է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դեմ։ Պայքարելով մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայության դեմ, սեմանտիկան ուղղակի շարունակում է կատարել մախիզմի ֆունկցիաները։

Ա. Ռապոպորտի «Դիալեկտիկական մատերիալիզմը և ընդհանուր սեմանտիկան» հոդվածը հանդիսանում է հանրահայտ ճշմարտությունների կոպիտ խեղաթյուրում ու կեղծում, մի ստոր բամբասանք մարքսիզմի փիլիսոփայության հասցեին։

Իր պաշտպանության տակ վերցնելով բոլոր տիպի մախիստներին, այդ թվում և ռուսական մախիստներին, իմպերիալիզմի այս վարձու գրչակը փորձում է իր քննադատության կրակն ուղղել Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» անմահ գրքի դեմ։ Ռապոպորտը դիալեկտիկական մատերիալիզմին, որն անվանում է դասակարգային, պարտիական գաղափարախոսություն, հակադրում է այսպես կոչված ընդհանուր սեմանտիկան, իբր մի անդասակարգային և անպարտիական փիլիսոփայություն։ Բայց այդ միայն Մախի և Ավենարիուսի բարբաջանքների խղճուկ կրկնությունն է և ոչինչ չի ավելացնում իր նախորդների մեծախոսություններին, որոնք մեկ և ընդմիշտ ջախջախված են Վ. Ի. Լենինի կողմից։ Բավական է միայն Ռապոպորտի տիպի ամերիկյան մախիստներին հիշեցնել հանճարեղ Լենինի խոսքերը։

«Եվ այժմ՝ փիլիսոփայության մեջ եղած պարտիաների տեսակետից նայեցե՛ք Մախին ու Ավենարիուսին, իրենց դպրոցով հանդերձ։ Օ՜, այդ պարոնները պարծենում են իրենց անպարտիականությամբ, և եթե նրանք ունեն հակ-

[1] А. Я. Вышинский. Вопросы международного права и международной политики, Юризлат, 1952, стр. 51.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 40։

ոտնյա, ապա դա միայն մեկն է և միայն ...մատերիալիստը: Բոլոր մախիստնե-րի բոլոր գրվածքների միջով կարմիր թելի նման անցնում է մատերիալիզմից և իդեալիզմից «վեր բարձրանալու», այդ «հնացած» հակադրությունը հաղթա-հարելու բթամիտ հավակնությունը, իսկ իրականում այդ ամբողջ միաբանու-թյունն ամեն բոպե հեռանում-ընկնում է իդեալիզմի մեջ, մշտական ու անշեղ պայքար մղելով մատերիալիզմի դեմ։ Որևէ Ավենարիուսի գնոսեոլոգիական նրբին աչքակապությունները մնում են պրոֆեսորական հերյուրանք, «իր» փոքրիկ փիլիսոփայական աղանդը հիմնելու փորձ, իսկ իրականում՝ արդի հա-սարակության իդեաների և ուղղությունների պայքարի ընդհանուր պարագա-ներում՝ այդ գնոսեոլոգիական խորամանկամտությունների օբյեկտիվ դերը մեկ է և միայն մեկ. ճանապարհ հարթել իդեալիզմի և ֆիդեիզմի համար, հավատարմաբար ծառայություն մատուցել նրանց»[1]։

Միանգամայն իրավացի էր մեծ Լենինը, որը բացահայտելով մախիզմի դասակարգային արմատները, նշել է, որ նրա դասակարգային դերը ամբողջո-վին հանգում է ընդհանրապես մատերիալիզմի և մասնավորապես պատ-մական մատերիալիզմի դեմ մղվող պայքարին։ Ամերիկյան ռեակցիայի ջաղափարախոսները ամենից ավելի սարսափում են պատմական մատերիա-լիզմից, քանի որ այն, որպես մարդկային հասարակության զարգացման վե-րաբերյալ միակ ստույգ գիտությունը, բանվոր դասակարգին ցույց է տալիս ճիշտ ուղի, նրան կողմնորոշում է հասարակական կյանքում, կոչ է անում դասակարդային պայքարի, կապիտալիստական ստրկության շղթաների կոր-ծանման։

Հենց այդ պատճառով էլ սեմանտիկյան իդեալիզմի ողջ ոհմակը աղաղա-կում է, թե չկա և չի կարող լինել ճշգրիտ սոցիալական գիտություն, ինչպես և չի կարող գոյություն ունենալ սոցիալական արդարություն։ Սեմանտիկ Ռապո-պորտը իր ընթերցողներից չի թաքցնում, որ իրեն և իր համախոհներին հասա-րակության մասին մարքսիստական գիտության մեջ ամենից շատ սարսափեց-նում է դասակարգային պայքարի ուսմունքը։ Տխրահռչակ Զեյզը, նշելով, որ Մարքսի ուսմունքի հիմնական հարցը դասակարգային պայքարն է, փորձում է հանգստացնել իր տերերին, հավատացնելով, թե այդ իդեան չի եղել բացար-ձակ իդեա ոչ այն ժամանակ և ոչ էլ հիմա։

Պայքարելով պատմական մատերիալիզմի դեմ, անգլո-ամերիկյան սե-մանտիկները փորձում են իրենց սոփեստությամբ մոլորության մեջ գցել աշ-խատավոր մասսաներին, պնդելով, թե իբր դասակարգային հասարակության պատմությունը ոչ թե դասակարգերի պայքարի պատմությունն է, որտեղ օբ-յեկտիվ անհրաժեշտությամբ գործում են հասարակության զարգացման սո-ցիոլոգիական օրենքները, այլ պատահականությունների մի կոնգլոմերատ, որը մասսաներին իբր ոչ մի հնարավորություն չի կարող տալ կանխատեսելու իրենց նույնիսկ մոտիկ ապագան։

Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմներին նվիրված իր կլասիկ աշխա-տության մեջ Ի. Վ. Ստալինը, մերկացնելով հասարակության զարգացման մա-սին բոլոր տեսակի իդեալիստական կոնցեպցիաները, բանվոր դասակարգին, կապիտալի լծի տակ տառապող աշխատավոր մասսաներին զինում է պայքարի ու հաղթանակի ստույգ հեռանկարով։ Արտադրողական ուժերի բնույթին ար-տադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության էկո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 458։

նոմիկական օրենքը, որի հանճարեղ մշակումը տրված է Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ, անառարկելիորեն ապացուցում է, որ կապիտալիստական երկրներում արտադրողական ուժերի բնույթի և արտադրական հարաբերությունների միջև եղած անտագոնիստական հակասությունը չի կարող շատ երկար տևել և, անկասկած, բանվոր դասակարգը, որպես ամենաառաջավոր հասարակական ուժ, պետք է խորտակի հին, կապիտալիստական արտադրական հարաբերությունները, ստեղծի նոր, սոցիալիստական արտադրական հարաբերություններ, որոնք համապատասխանելով արտադրողական ուժերի բնույթին, հնարավորություն կստեղծեն հասարակության վերընթաց զարգացման համար։

Ժխտելով հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, օբյեկտիվորեն գոյություն ունեցող դասակարգային պայքարն ընդհանրապես, սեմանտիկները ջանում են ժխտել նաև այդ պայքարի ձևերից մեկի՝ դասակարգային իդեոլոգիաների պայքարի նշանակությունը։ «Պայքարը իդեաների միջև,— գրում է Զեյզը,— հանդիսանում է տերմինների հակասություն։ Իդեաները չեն կարող պայքարել որպես գնդակներ»։

Ցանկանալով ժխտել իդեոլոգիական պայքարի նշանակությունը, անգլո-ամերիկյան սեմանտիկները նպատակ են հետապնդում ամեն կերպ արդելակել բանվոր դասակարգի իդեոլոգիայի՝ կոմունիստական իդեոլոգիայի տարածումը, մի իդեոլոգիա, որը ավելի և ավելի է համակում աշխատավոր լայն մասսաներին և լուսավորում է նրանց պայքարի ու հաղթանակի ուղին։

Սեմանտիկյան «փիլիսոփայության» դասակարգային ու ճանաչողական արմատների մերկացմանը խոշոր նշանակություն են տալիս արտասահմանյան պրոգրեսիվ փիլիսոփաները։ Անգլո-ամերիկյան կոմունիստ փիլիսոփաները դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դիրքերից պայքարում են ամերիկյան իմպերիալիզմի նեխած գաղափարախոսության դեմ՝ տրամաբանական պոզիտիվիզմի և նրա ծայրահեղ ռեակցիոն տարատեսակ սեմանտիկյան իդեալիզմի դեմ։

Այդ ֆաշիստական գաղափարախոսության հետևողական մերկացնողի դերում հանդես է գալիս անգլիական կոմունիստ փիլիսոփա Մորիս Կորնֆորտը։ Դեռևս 1947 թ. «Տրամաբանական պոզիտիվիզմի մատերիալիստական գնահատականը» հոդվածում[1] Կորնֆորտը ճիշտ կերպով նկատում է, որ տրամաբանական պոզիտիվիզմը հանդիսանում է սուբյեկտիվ իդեալիզմի տարատեսակներից մեկը և ուղղված է Մարքսի մատերիալիզմի դեմ։ Տրամաբանական պոզիտիվիզմի և սեմանտիկյան իդեալիզմի ավելի հիմնավոր քննադատությունը Կորնֆորտը հետագայում տվել է սովետական ընթերցողին ծանոթ «Наука против идеализма» և «В защиту философии» գրքերում։

Մերկացնելով Զեյզի, Յունգի, Ֆոգտի, Նեյրաթի և ամերիկյան իմպերիալիզմի այլ փիլիսոփայող սպասարկուների սոփեստական հերյուրանքները, Կորնֆորտը իր աշխատություններում բացահայտում է սեմանտիկյան իդեալիզմի դասակարգային արմատները, ապացուցում, որ սեմանտիկյան իդեալիզմը սոսկ կաբինետային փիլիսոփայություն չէ, այլ հանդիսանում է ամերիկյան մոնոպոլիստական շրջանների փիլիսոփայությունը և նպատակ է հետապնդում շեղել բանվոր դասակարգի ուշադրությունը կապիտալիզմի դեմ

[1] Տես M. Cornforth, A Materialist Evaluation of Logical Positivism, „The Modern Quarterly", New Series, vol. 2, number 2, Spring, 1947.

մղվող պայքարից, թունավորել հասարակ մարդկանց գիտակցությունը, քարոզելով, թե սոցիալական հակասությունները իբր կարելի է վերացնել լեզվական ռեֆորմների միջոցով։

Ավստրալիական «Communist Review» ամսագրի էջերում Գ. Գոուլդը միանգամայն իրավացիորեն նկատում է, որ սեմանտիկյան «փիլիսոփայությունը», ինչպես և իդեալիստական բոլոր տեսակի ուղղությունները, ծառայում են շահագործողների և պատերազմի հրձիգների շահերին։ «Կառչիր բառերից, ուշադրություն մի դարձրու նյութական իրերի վրա և, ավելի լավ, ժխտիր հենց դրանց գոյությունը։ Ինչքան լա՜վ է այս «փիլիսոփայությունը» պաշտպանում գոյություն ունեցող կապիտալիստական կարգը»[1],— հեգնանքով նկատում է Գոուլդը։

Հոլանդական «Politiek en Cultuur» ամսագրում հրատարակված «Հոլանդական լեզուն և անկախության համար պայքարը»[2] հոդվածի հեղինակը ցույց է տալիս այն սերտ կապը, որ գոյություն ունի ՄԱԿ-ի նիստերում անգլո-ամերիկյան բլոկի դիվանագետների արտասանած սոփեստական ճառերի և սեմանտիկյան իդեալիստների գրվածքների միջև։ Կոնկրետ օրինակներ բերելով, հեղինակն ապացուցում է, որ սեմանտիկյան իդեալիզմը հանդիսանում է իմպերիալիստական» ռեակցիայի «թեորետիկական» արտահայտությունը։

Բնորոշ է, որ անգամ իրենց Մարքսի հետևորդները չհամարող մարդիկ նույնպես հաճախ հանդես են գալիս սեմանտիկյան «փիլիսոփայության» դեմ, ապացուցելով, որ այն հանդիսանում է ամերիկյան իմպերիալիզմի ֆաշիստական գաղափարախոսությունը։ Այս տեսակետից հիշատակության արժանի է ամերիկյան պրոֆեսոր Բարրոուզ Դանհեմի «Man Against Myth» գիրքը, որը միայն 1947 թ. Բոստոնում հինգ հրատարակություն է ունեցել։ Մանրամասնորեն վերլուծելով անգլո-ամերիկյան սեմանտիկների գրվածքները, բացահայտելով սեմանտիկյան իդեալիզմի սոցիոլոգիական արմատները, պրոֆ. Դանհեմը հանգում է հետևյալ եզրակացության. «բոլոր դեպքերում փաստերը էմպիրիկ ձևով հաստատում են այն, ինչ մենք բխեցրել ենք թեորետիկական վերլուծությամբ,—գոյություն ունի անկասկած ազգակցություն սեմանտիկյան փիլիսոփայության և ողջ ֆաշիստական ու ռեակցիոն գաղափարախոսության միջև»[3]։

Սեմանտիկյան իդեալիզմը հանդիսանում է անգլո-ամերիկյան ժամանակակից բուրժուական փիլիսոփայության այն տարածված հոսանքներից մեկը, որը կատաղի պայքար է մղում բանվոր դասակարգի ռևոլյուցիոն փիլիսոփայության՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դեմ։ Սեմանտիկյան «փիլիսոփայությունը» փորձում է «թեորիապես» արդարացնել կապիտալիզմի իբր հավերժական գոյությունը, իմպերիալիստական պատերազմներն ու էքսպանսիաները, ազատասեր ժողովուրդների գաղութացումը, պատերազմի հրձիգների, գերմանական, իտալական և յապոնական ֆաշիզմի վերակենդանացումը, ԱՄՆ-ի, Անգլիայի, ինչպես նաև Ատլանտյան բլոկի մեջ մտնող մյուս երկրների ներքին և արտաքին քաղաքականության լրիվ ֆաշիզացումը։ Հենց այդ պատճառով էլ սեմանտիկյան իդեալիզմը վայելում է Ատլանտյան բլոկի ոգեշնչողների անմիջական հովանավորությունը։

---

[1] L. Henry Gould, On the „Philosophy" of Semantics, „Communist Review". Sydney, April, 1952, p. 119.

[2] Տես B. W., De Hederlandse toal en de strijd voor onafhankelvjkheid, „Politiek en Cultuur". Amsterdam—C. Mei, 1952.

[3] B. Danham, Man Against Myth, p. 206.